

«ԳԱՐՈՒՆ» ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ
(1910–1912 թթ.)

ՄԱՐԳՈ ՄԻԻԹԱՐՅԱՆ

1910 թ. Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանողներ Վահան Տերյանը, Պողոս Մակինցյանը և արձակագիր, Ենայի համալսարանի շրջանավարտ Կարեն Միքայելյանը հիմնադրում են «Գարուն» գրական-գեղարվեստական հանդեսը: Նրանց ծրագրի իրականացմանը մեծապես նպաստում են Լազարյան ճեմարանի դասախոս Կարապետ Կուսիկյանը և բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանը, որոնք և կազմում են հանդեսի հրատարակության «Կոչ» անունը կրող ծանուցումը, որը 1909 թ. վերջերին հրատարակվում է լրագրերում: Այն ազդարարում էր. «Մոսկվայում կազմված մի դրական խմբակի նախաձեռնությամբ 1910 թվից կսկսեն հրատարակվել մի շարք գրական-գեղարվեստական ամսանախներ «Գարուն» վերնագրով: Ալմանախը սլիտի հնարավորություն տա մեր բոլոր ուսաստանայ և տաճկահայ հեղինակների հավաքական արտահայտության և խրախուսողը հանդիսանա երիտասարդ ու սկսնակ գրողներին»¹: Խմբագրությունը հայտնում էր նաև, որ ոչ միայն ապահովված է հրատարակության նյութականր, այլև որոշված է խստիվ սլահպանել վարձատրության սկզբունքը: Հոնորարը սահմանված էր համաձայն դրական աշխարհում ընդունված վարձատրության առավելագույն չափի:

Նիկողայոս Ազոնցի հիմնադրած «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի երկու գրքերի տպագրության ժամանակից անցել էր հինգ տարի: Ուրվագծվում էր նաև «Մուրճ» ամսագրի հրատարակության մայրամուտը: Գրական կյանքը, կարծեք, կորցնում էր աշխուժությունը, երիտասարդ գրողների ստեղծագործությունների տպագրության հարցը չէր հուզում մարզկանց: Մոսկվայի հայ ուսանողները միջոցներ են որոնում շտկելու իրավիճակը, բարձրացնելու հայ գրականության կշիռը և արևմտահայ ու արևելահայ գրողների երկերի համատեղ հրատարակությամբ նոր ոգի հաղորդելու հայ գրականությանը:

Այս խնդիրը նրանց համար մեծ կարևորություն էր ստանում նաև քաղաքական նկատառումներով: Հայկական հարցի ճակատադիրը, որը Տերյանի արտահայտությամբ հայության համար դարձել էր «կյանքի ու մահու խնդիր», շարունակում էր մնալ չլուծված: Հայերը, չնայած ապրել էին գարավերջի հայկական կոտորածների մղձավանջային ժամանակները և հուսախաբվել եվրոպական դիվանագիտության սին խոստումներից, շարունակում էին փայփայել Հայաստանի ազատագրության դադափարը: Տերյանը թե՛ ուսանողական տարիների իր հայրենասիրական մտորումներ

1 Վ. Տ ե Ր Յ Ա Ն. Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ). հ. 3, Երևան, 1975, էջ 397:

րում. թե՛ ընկերների հետ կազմած գործնական ծրագրերում և թե՛ ավելի ուշ՝ 1914 թ. տպագրած «Հոգևոր Հայաստան» հոդվածում ու նույն թվականին Թիֆլիսում կարդացած հրապարակային զեկուցան մեջ՝ հանգամանորեն քննարկում էր այդ հարցը: Անկախ այն բանից, որ նա հայության նվիրական այդ երազանքի իրականացումը բաղձալի էր համարում. այդուհանդերձ սթափ հայացքով վերլուծելով Հայաստանի քաղաքական իրավիճակը՝ թերահավատություն էր հայտնում առ այն. թե մի գարկով. նույնիսկ հերոսական ճիգով հնարավոր է ազատագրել Հայաստանը: «Պետք է տենչալ սրտի բոլոր գորությամբ և մեր բոլոր կարողությամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծվի այդ արյունլիկ հարցը»:

Սակայն դրանով չի վերջանում մեր անելիքը. գա միայն նախադուռն է մեր ապագա հայրենաշեն, աղագահուույց գործի»², – գրում է նա: Հայաստանն ավերված է և այն հարկ է ոտքի կանգնեցնել: ահագանգելով նաև հայության հոգևոր հայրենիքի ավերման մասին, նա հայտարարում է, որ առանց բարձրացնելու, կենդանացնելու հոգևոր Հայաստանը, անհնար է կենդանացնել նյութական Հայաստանը: Ուստի, ստեղծված պայմաններում Տերյանն անհրաժեշտ է գտնում զբաղվել նախ առաջնահերթ, ավելի «խոշոր ու վսեմ աշխատանքով», որն իմաստալից ու վեհ է համարում իր ներքին բովանդակությամբ: Այդ ծրագիրը նա անվանում է «հայության հավաքում» կամ հայության կազմակերպում գաղափարական իմաստով: 'Իս «Հոգևոր Հայաստանի» գաղափարն է, «այն կուլտուրան է, այն կուլտուրայես կազմակերպված ժողովուրդն է, որի գալուն մենք կուզեինք հավատալ», – գրում է նա³: Կուլտուրական ազգ լինելու համար Տերյանը միաժամանակ անհրաժեշտ է համարում, որ հայերը յուրացնեն եվրոպական ժամանակակից մշակույթը և ստեղծելով իրենց ինքնատիպ հոգևոր արժեքները, կուլտուրական ազգերի գերդաստանը մուտք գործեն ոչ իբրև խորթ գավակներ, այլ ձուլեն իրենց կյանքը «համամարդկային կյանքի հոսանքին», ունենան իրենց «ստեղծագործական բաժինը հանուր մարդկային ստեղծագործության մեջ»⁴:

Նշելով, որ «մեր մեռած կյանքը կենդանության նշաններ է ցույց տալիս», Տերյանը հայ մտավորականությանը կոչում է համակվել ներքին հավատով և խոր գիտակցությամբ, կենդանություն ներշնչել «մեր կիսամեռ հոգևոր հայրենիքին, մեր ավերվող ու անդարձ անհետացող հոգևոր Հայաստանին»⁵: Դրա համար նա անհրաժեշտ է համարում անդադար ստեղծել այն մշակութային արժեքները, որոնք ազգի ինքնության առհավատչյաններն են: Այս պարագաներում միայն, երբ կպահպանվի հոգևոր Հայաստանը, Տերյանը վստահություն է հայտնում, որ «կենդանի կլինի և այն Հայաստանը, որի համար մեր ժողովուրդը թափում է այսօր իր արյունը»⁶:

Կարծում ենք, Տերյանը շարունակում է զարգացնել Ադոնց հրապարակախոսի այն միտքը, թե հայերը, ուսումնասիրելով հանդերձ եվրոպական քաղաքակրթությունը, պետք է ազգերի ընտանիքում հանդես գան իրենց

2 Նույն տեղում, էջ 105:

3 Նույն տեղում, էջ 113:

4 Նույն տեղում, էջ 77:

5 Նույն տեղում, էջ 117:

6 Նույն տեղում, էջ 118:

ստեղծած մշակութային արժեքներով, ձևավորված ազգային անհատականությունը և քաղաքակրթության պատմության մեջ գրեթե իրենց էջը: «Մի ազգի վսեմ ձգտումն ու գոյություն իրավունքը այլ, ավելի սուրբ սկզբունք չէ ճանաչում»⁷,— գրում է Ազոնցն այդ առթիվ: Ահա պատմական ժամանակաշրջանի քաղաքական այս բացառիկ իրավիճակի թելադրանքով է, որ Տերյանը և նրա բարեկամները վճռում են օգտվել պարբերական մամուլի ընձեռած լայն հնարավորություններից:

«Դարի հրամայականով» մեծարժեք իր հոգվածում բանասիրական գիտությունների գոկտոր Ս. Աղաբաբյանը, քննության առնելով XX դ. առաջին տասնամյակի գրականության առանձնահատկությունները, նշում է, որ գարսակզբին ազգային հարցը փակուղուց գուրս բերելու նպատակով հայ գործիչներն ապավինում էին «Հոգևոր Հայաստանի» ամենաբանական ծրագրին, որն իր ցայտուն արտահայտությունն է գտնում Հովհաննես Թումանյանի և Տերյանի կուլյթներում ու հոգվածներում⁸:

1908 թ., երբ վճռվում է հրատարակել «Գարուն» ամսանախը, Տերյանը դեռևս Մոսկվայի համալսարանի ուսանող էր, զուրկ նյութական միջոցներից և, բնականարար, առաջադրված խնդիրը կարող էր կատարել գործակիցների օժանդակությամբ: Այս հարցում մեծ սիրով և նվիրվածությամբ նրան օգնության ձեռք են պարզում Պ. Մակինցյանը, Կ. Միքայելյանը, կարճ ժամանակից նաև Յ. Խանզադյանը:

Հաղարյան ճեմարանի վաստակաշատ գասախոս Կ. Կուսիկյանը և բանաստեղծ Ալ. Ծատուրյանը հանձն են առնում «Գարունի» հիմնադրման կազմակերպական գործերը և նվիրատուների օգնությամբ կարգավորում են գրամական հոգսերը: Կազմվում է խմբագրական մարմին՝ Կուսիկյանի, Ծատուրյանի, Մակինցյանի, Միքայելյանի և Տերյանի անգամակցությամբ:

Արդեն 1908 թ. «Գարունի» հիմնադրումը վճռված էր: Երբ 1908 թ. գարնանը Տերյանը մեկնում է Թիֆլիս՝ զբաղվելու «Միջազգի անուրջներին» հրատարակության հարցով, նա տեղի հայ գրողներին ծանոթացնում է առաջիկայում հրատարակվելիք ժողովածուի բովանդակությանն ու խնդիրներին: Այսպես, Յ. Խանզադյանին հղած ապրիլի 30-ի թվակիր նամակում նա գրում է, որ ինքը Թիֆլիսի մտավորականներին արդեն հայտնել է, թե Մոսկվայում մի խումբ ուսանողներ Ծատուրյանի և Կուսիկյանի ղեկավարությամբ պատրաստվում են գրական-գեղարվեստական ժողովածուներ հրատարակել⁹: Հաջորդ մայիսի 13-ի թվակիր նամակում նա Խանզադյանին տեղեկացնում է, որ Թիֆլիսի գրողները համակրանքով են վերաբերվում իրենց ձեռնարկությանը, «և Շանթը, Ավոն, Նար-Դոսը, Պետրոսյանը և Թումանյանը խոստանում են աշխատակցել»¹⁰:

Այդ օրերին «Գարունի» փաստական խմբագիր Տերյանը Կուսիկյանից ստանում է նաև «Կոչի» բնագիրն ու «Ըղձալի ամսանախի մասին» նրա

7 «Բանբեր գրականության և արվեստի», գիրք Ա, 1903, էջ 222:

8 Ս. Աղաբաբյան. XX դարի հայ գրականության զուգահեռականներում. գիրք 1, Երևան, 1983, էջ 6-7:

9 Վ. Տերյան. Եժ. հ. 3, էջ 253:

10 Նույն տեղում, էջ 264:

Հաղորդած տեղեկությունները¹¹: Մայիսի 14-ի թվակիր պատասխան նամակում նա դոկումենտացիան է հայտնում «Կոչի» վերաբերյալ և ավելացնում. «Գրական-քննադատության բաժինը, որ Դուք մտցրել եք Ալմանախի ծրագրում, համակրելի է. միայն եթե այնտեղ ևս պահպանվեն մեր հիմնական պահանջները—անաչառություն և լրջություն»: Անդրադառնալով Ալմանախին, նա մատնանշում է, որ իր կարծիքով, այն «պետք է մի նաևավոր տեղ բռնե մեր գրական մամուլի մեջ»¹²: 1910 թ. ապրիլին պատրաստվում է «Գարունի» շապիկի՝ Մարտիրոս Սարյանի կատարած ձևավորումը, որի առթիվ Տերյանը գրում է նամակներից մեկում. «Մենք բոլորս հավանեցինք նրա նկարը»¹³:

Ալմանախի առաջին հատորը լույս է ընծայվում 1910 թ. մայիսի 2-ին Ալ. Մատուրյանի գրական գործունեության 25-ամյակին նվիրված հոբելյանի օրը: Ոգևորված այդ երկու առիթներով՝ Տերյանը, Կուսիկյանը և Միքայելյանը ողջունյի նամակ են հղում նրան, որից մեջ ենք բերում մի հատված.

«Թանկագին Հոբելյար,

Սիրելի աշխատակից

Մի երջանիկ գուղագրի պոթյամբ այսօր, այս գրական մեծ տոնին լույս ենք ընծայում առաջին գիրքը «Գարուն» գրական-գեղարվեստական Ալմանախի, որի խմբագրության անդամներից մեկն եք և Դուք:

Մենք գիտենք, տատասկոտ ու փշոտ է Հայ բանաստեղծի ճանապարհը. եթե ուրիշ ազգերի մեջ բանաստեղծ լինելու համար հարկավոր է միայն աստվածային կայծ ունենալ, մեր իրականության մեջ բանաստեղծը պետք է նաև հերոս լինի...

Այսօր, Ձեր 25-ամյա Հոբելյանի օրը, «Գարուն»-ի խմբագրությունը ամենաջերմ սիրով ողջունում է Ձեզ, Թանկագին Հոբելյար, և խոնարհվում է Ձեր երկարամյա տանջալից կյանքի և ազնիվ աշխատանքի առաջ»¹⁴:

Տերյանը մեծագույն սիրով էր կապված նաև խմբագրության մյուս անդամների հետ, որոնց հղած նրա նամակներն աչքի են ընկնում անօրինակ անկեղծությամբ ու ջերմությամբ, ինչ-որ մի մանկական անմիջականությամբ և միաժամանակ իմաստունի բարի երգիծանքով: Առանձնապես մտերմական էին նրա և Միքայելյանի փոխհարաբերությունները, որին 1913 թ. դեկտեմբերի 12-ի թվակիր նամակում անվանում է Հանդեսի և «լիազոր, և՛ քարտուղար, և՛ էքսպեդիտոր, և՛ դանձապահ անթվիլի ու անհաշվելի գումարներին «Գարնան»՝ Կարին մականվանյալ ազգեն Միքայելյան—բելլետրիստ և հումորիստ և կամոքն աստուծո զրամատուրգ նորածիլ, ինքն և Ջոկ ծագմամբ»¹⁵:

Ահա ընկերական այսպիսի սրտաբուխ փոխհարաբերությունների մթնոլորտում է ծնունդ առնում և Հայ պարբերական մամուլի անդաստան

11 Ի դեպ, Ալ. Մատուրյանին հղած նամակներից մեկում, Տերյանը խոսելով «Գարունի» մասին, քնքշորեն այն անվանում է «մեր փայփայած Ալմանախը» (ան՝ս նույն տեղում, էջ 269):

12 Նույն տեղում, էջ 266:

13 Նույն տեղում, էջ 321:

14 Նույն տեղում, էջ 322:

15 Վ. Տ երյ ա ն. Ե ժ. Հ. 4, Երևան, 1979, էջ 128

մուտք գործում երիտասարդ հայ լրագրողների տաղանդի գեղեցիկ արգասիքը՝ «Գարուն» ամսանախը, որը Ս. Աղաբաբյանի դիպուկ բնութագրությամբ «պետք է դառնար հայ իրականության «նոր հոսանքի» ջահակիրը»¹⁶:

«Գարունի» առաջին գրքի հրատարակությունից հետո Տերյանն իրերի բերումով մեկնում է հայրենիք: Այդ օրերի նրա նամակները վկայում են, որ երիտասարդ բանաստեղծին գրական ստեղծագործություններից ոչ պակաս գրադեցնում էին և լրագրային-հրատարակատնային գործերը: 1910 թ. հունիսին Միքայելյանին հղած նամակներում նա հաղորդում էր, որ «Գարուն» արժանացել է Թիֆլիսի գրողների հավանությանը, չնայած այն բանին, որ վերջիններիս կարծիքով ամսանախում տեղ էին դրել նաև թույլ գործեր: Նա տեղեկացնում էր նաև, որ Վ. Փափազյանը հավանել է նրա «հրեզուրտի ծրագիրը» պատմվածքը, իսկ Հ. Թումանյանը խոստացել է նյութեր տրամադրել երկրորդ գրքի համար: «Ընդհանրապես իմ հույսերը մեծ են «Գարուն»-ի վերաբերությամբ, — շարունակում է խանգավառ խմբագիրը, — և մեզ մնում է եռանգով առաջ տանել գործը, միայն խիստ վերաբերվելով գեպի նյութերը: Ես հավատացած եմ, որ 2-րդ գիրքը ավելի հետաքրքրական կլինի»¹⁷:

Տերյանը 1910-1911 թթ. մեծ եռանգով գրադավում է երկրորդ գրքի հրատարակության հետ կապված հարցերով: Իր նամակներում նա Հ. Թումանյանին «Ջերմագին խնդրում է» մի գրվածք ուղարկել «Գարունի» համար, իսկ Արշակ Չոպանյանին առաջարկում երրորդ գրքի համար հոգված գրել նվիրված արևմտահայ գրականությանը. «Խմբագրությունը ամենացանկալի համարեց տեսնել Ձեր անունը իր այդ գրքի ցանկի մեջ»: 1912 թ. նա Յ. Խանգազյանին հանձնարարում է հոգված պատրաստել չորրորդ գրքի համար¹⁸:

Տերյանը միաժամանակ գրադավում էր նաև գուտ խմբագրական աշխատանքներով: Ղեկավարվելով իր իսկ առաջագրած անաչառության և լրջության սկզբունքներով, 1910 թ. հունվարի 9-ին Խանգազյանին հղած նամակում նա ափսոսանքով հայտնում է, որ «ամսանախի համար նյութեր ստացվում են շատ, բայց լավ բան գրեթե չկա»¹⁹: Քննության առնելով ստացված գրական նյութերը, նա Ալ. Ծատուրյանին հանձնարարում է բանաստեղծ Սիմեոն Բաբիյանից խնդրել մի քանի բանաստեղծություն, որպեսզի ընտրություն կատարելու հնարավորություն ունենար²⁰: Ի դեպ, վերջինիս «Կրակն այս գիշեր» բանաստեղծությունը Տերյանը թեև հավանել էր, բայց գտնում էր, որ այն կարիք ունի լրացուցիչ մշակման:

1913 թ. Տերյանը մեկնում է Պետերբուրգ և հանձնարարական նամակով ներկայանում Նիկողայոս Մառին, որը նրան խորհուրդ է տալիս անպայման ընդունվել համալսարան և լսել իր գասախոսությունները: «Ադոնցըր նույնն ասաց, և երկուսն էլ խրախուսեցին ինձ», — հայտնում էր նա Խան-

16 Ս. Աղաբաբյան. նշվ. աշխ., էջ 102:

17 Վ. Տերյան. եժ. հ. 3, էջ 326:

18 Նույն տեղում, էջ 335, նույն տեղում, հ. 4, էջ 29, 54-55:

19 Նույն տեղում, հ. 3, էջ 317:

20 Նույն տեղում, էջ 333:

գաղթյանին հղած հոկտեմբերի 13-ի թվակիր նամակում²¹: Ընդունվելով Գետերբուրգի Համալսարանի արևելագիտական ֆակուլտետը, որը հետագայում նրանից անսահման շատ ժամանակ էր կլանում, Տերյանը լրջորեն խորհում էր նաև մի լիարժեք պարբերաթերթ հրատարակելու մասին՝ նույն նամակում իր ուրախությունը հայտնելով մամուլում տպագրվող Խանգաղյանի հոդվածների առթիվ, նա, սակայն, ավելացնում է, որ առավելագույնս ուրախանում է «վաղվա, գալիքի համար, երբ կմիանանք մի ասպարում (կամ թեև դա շատ դժվար է նյութականի տեսակետից լրագրում, իսկական, մեծ լրագրում), ամուր ու հաստատուն մի գործ կհիմնենք և այն ժամանակ ցույց կտանք «մերոնց», թե ի՞նչ է իսկական ժուռնալը, ի՞նչ է իդեական խոսքը և իսկական գրականությունը»²²:

Հենց այդ օրերին է Տերյանը ստանում Կ. Միքայելյանի նամակը, որով հաղորդվում էր «Գարունի» հրատարակության վերջնական դադարեցման մասին: 1913 թ. դեկտեմբերին, կես դառնությամբ, կես կատակով պատասխանելով Միքայելյանի նամակին՝ Տերյանը, «ի տեր հանգուցյալ» «Գարուն» այմանախնների «խմբագրության բազմաշխատ, քրտնաջան, վաստակաբեկ, մարտիրոսացած խմբի» եռանդուն անդամը, գրում է. «Մեռավ «Գարուն»-ը-կեցցե՛ «Գարուն»-ը»: Նետենք նրան ապագա պատմաբանի մունտառ զամբյուղը, թող քրքրե և ըստ արժանվույն գնահատե»²³:

Այն, որ Տերյանն այս նամակում հնարավոր է համարում կատակել, վկայում է այն վճռականություն մասին, որով նա այդ պահին տոգորված էր: Հարցի էությունն այն էր, որ Տերյանի ընկերներն այդ օրերին մի նամակում ակնարկել էին ինչ-որ նոր «Գարունի» հրատարակություն սկսելու իրենց մտադրության մասին: Սակայն թեև անցնում է ավելի քան մեկ տարի բարեկամները նրան չեն ուրախացնում կենդանի գործի որևէ հեռանկարով: Ավելին, նրանք լռում էին, իսկ Տերյանի «մենակությանը չափ չկար»: Եվ ահա, 1915 թ. մարտի 12-ին նա մի հանգամանալից նամակ է ուղարկում Միքայելյանին, որում ոչ միայն նկարագրում էր լռության դատապարտվածի իր ծանր ապրումները, այլև ներկայացնում էր ապագա գործունեության մի ամբողջ ծրագիր: Նա անկեղծորեն գրում է, որ սկսել է «ավելի հոռի նայել» իր ընկերների կյանքի վրա: «Առաջ գոնե միասին եք բազում էինք, որ մի բան պիտի անենք, որ մեզ վիճակված է ինչ-որ, կթե և փոքր, սակայն նոր ու թարմ հոսանք մտցնելու մեր մեռնող գրականության մեջ. այժմ կարծես դադարեցինք և երազելուց...»: Յուրաքանչյուրը զբաղված է իր առօրեական հոգսերով, շարունակում է նամակապիրը. «Մեծերը» Հևաանալով երիտասարդներից, գնում են իրենց «ծնծված ու սովորական ճամփով: ... Իսկ մենք ջրից հանած ձկների պես սմբկցինք ու մեռանք-ինչ-որ անդործ և աներազ թմրության մատնված»²⁴:

Նա թեև մեծ նշանակություն է տալիս նյութական հանգամանքներին, որոնք «սպանում» են իրանց լծի տակ», բայց չի վհատվում: «Գուցե հնարավոր լիներ և մեզ գոնե ոչ բոլորովին մեռնել, եթե գեթ մասամբ կարելի

21 Նույն տեղում, հ. 4, էջ 109:

22 Նույն տեղում, էջ 110:

23 Նույն տեղում, էջ 128:

24 Նույն տեղում, էջ 183-184:

լինել իրագործել մեր «Հավաքումը»: «Ես Հավատում եմ, որ Հնարավոր է մեր կյանքում համախմբել երիտասարդ ուժեր (կան այդ ուժերը և երբ գործ լինի կլինեն և նորերը) և կենդանության ու նորություն շունչ ներշնչել մեր գրականության»: Նա համոզված էր, որ քանզի այդ ուժերը կան իրենք կոչված են «գուցե և փոքր, բայց ազնիվ ու նոր գործ կատարելու»: «Ահա թե ինչու վերջերս իմ գլխից էլի գուրս չի գալիս սեփական թերթի գաղափարը»: Իհարկե, պետք է մտածել և նյութականի մասին, բայց «մենք երիտասարդներս պետք է ունենանք մեր թերթը, դա անհրաժեշտ է և մի՞թե դա անհնար է միանգամայն»²⁵, – շարունակում է Տերյանը և ներկայացնում իր մշակած ծրագիրը: Նա նպատակահարմար է գտնում հիմնադրել հինգ մամուլ ծավալ ունեցող ամսագիր, ընդ որում, այս ամսագրի 6 համարները նպատակահարմար է գտնում հրատարակել 1500–1600 ռուբլի գումարով, «այսինքն, մոտավորապես այնքան, որքան մենք ծախսեցինք վերջին «Գարուն»-ի վրա, մինչդեռ վեց ամիս շարունակ Հնար կունենանք արտահայտվելու և ամեն կերպ–իմ կարծիքով սա ավելի լավ կլինի, քան մի «Գարուն»-ը»²⁶:

Կարճ ժամանակից Տերյանը խանդադրանքի առաջարկում է Միքայելյանի հետ միասին գնալ Պետերբուրգ՝ այս հարցի շուրջ խորհրդակցելու համար: Նյութական դժվարությունների պատճառով ամսագիր հրատարակելու ծրագիրը մնում է անիրագործելի, բայց երբ ստեղծվում է փոքր-ինչ Հնարավորություն, Տերյանը, Միքայելյանը և Մակինցյանը վճռում են շարունակել գեթ «Գարունի» հրատարակությունը: Այդ օրերին Տերյանը գրում է. «Եթե անհնար է գոնե փոքրիկ մի ամսագիր ունենալ, որ, ըստ իս, ավելի կենդանի բան կլինել–եթե հաջողվեր, և ավելի մեծ նշանակություն կունենար: Սակայն եթե այդ անհնար է, այն ժամանակ գոնե թող ժողովածու լինի–նույն «Գարուն»-ը»²⁷:

Պետերբուրգում մշակվում է «Գարունի» չորրորդ գրքի ծրագիրը: Այն բավականաչափ ղանադանվում էր առաջին երեք գրքերից: Այսպես, չորրորդ գրքին աշխատակցելու էին հրավիրվում Ն. Մառը, Ի. Օրբելին և Ն. Ադոնցը, ընդ որում, նրանց ընտրած թեմաները գուտ պատմագիտական, բանասիրական և լեզվաբանական բնույթ ունեին: Ծրագրված էր դիտական հոդի վրա դնել նաև դրական-քննադատական բաժինը: Այստեղ նպատակահարմար էր դիտվում առանձին գրողների ստեղծագործությունների փոխարեն քննարկել տեսական հարցեր, մշակել դիտական սկզբունքներ ու առաջարկներ՝ կապված գրականագիտության ընթացիկ և ապագա գործընթացների հետ: Տերյանը ծրագրում էր դրել մի հոդված «Լեզուն մեր նոր պոեզիայի մեջ» կամ «Լեզուն, ոճը և ձևերը մեր նոր պոեզիայում» թեմայով:

1916 թ. մարտին, երբ Պետերբուրգում տպագրական և ֆինանսական բավարար պայմաններ են ստեղծվում, «Գարունի» երիտասարդացված խմբագրությունն իսկույն ձեռնարկում է ժողովածուի հրատարակության գործը: Ապրիլին տեղ ունեցած «պլենար ժողովը» որոշում է կայացնում

25 Նույն տեղում, էջ 184:

26 Նույն տեղում, էջ 186:

27 Նույն տեղում, էջ 199:

«Մշակ» և «Հորիզոն» թերթերին հայտարարություն ուղարկելու մասին, որով ծանուցվեք նույն թվականի աշնանը «Գարունի» շորըզ գրքի տպագրությունը: Խմբագիր-հրատարակիչներն էին Տերյանը, Մակինցյանը, Միքայելյանը: Ի գեպ, թեև Մակինցյանը թերահավատ էր հաջողության նկատմամբ, բայց Տերյանը համոզմունք էր հայտնում, որ Պետերբուրգում կան և տպագրական հարմարություններ և գրամ հայթայթելու հեռանկարներ:

Այսպես, գործի տեխնիկական կողմի ապահովումը հանձնառարվում է Մակինցյանին, գրական նյութերի ստուգումը՝ Միքայելյանին, իսկ Տերյանը պետք է իրականացնեք հավանաբար խմբագրական-հրատարակական հարցերի հետ կապված ընդհանուր ղեկավարությունը: Նա զբաղվում էր տպագրության վայրի ճշգրտման և թղթի հայթայթման հարցերով, ինչպես և Մոսկվա՝ Միքայելյանին էր առաքում ստացված գրական նյութերը: Ի գեպ, ինչպես նախկինում, նա դարձյալ դժգոհում էր գրական գործերի մակարդակից. Միքայելյանին ամռանը դրում էր, որ «նյութեր» է ստացել, «բայց մեջը բան չկա»: «Իսկ դու ի՞նչ ես գրել «Գարուն»-ի համար»²⁸. – հարցնում է նա գործընկերոջը:

Չորրորդ գրքի տպագրության նախասյուտրաստական աշխատանքներն ընթանում էին այնպես, ինչպես նախատեսված էին, բայց երբ ամեն ինչ որոշակի էր ու ճշգրտված, իրերի դրությունն ամբողջությամբ փոխվում է: Պարզվում է, որ Կոստանգին Կրասիլնիկյանի խմբագրությամբ Խաքվում ծրագրված «Գործ» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիրն արդեն պատրաստ է հրատարակության:

Տերյանի խմբագրությունն այս պարագաներում աննպատակահարմար է գտնում սկսել «Գարունի» հրատարակությունը: «Հորիզոն» թերթի 1917 թ. հինգերորդ համարում տպագրվում է Տերյանի, Մակինցյանի, Միքայելյանի նամակը խմբագրությանը, որով ծանուցվում էր, որ «Գարուն» ամսանախը չի հրատարակվի, «ի նկատի ունենալով «Գործ» ամսագրի երևան գալը»²⁹:

* * *

«Գարունի» հիմնական գրական բաժինն աչքի է ընկնում իր թարմությամբ և բազմազանությամբ: Այստեղ ներկայացված են ժամանակին ճանաչում գտած արևելահայ և արևմտահայ արձակագիրներից ու բանաստեղծներից շատերը: Առաջին և երկրորդ գրքերում դետեղվել են Ավետիս Ահարոնյանի, Լևոն Շանթի, Վրթանես Փափազյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Դերենիկ Դեմիրճյանի, Կարեն Միքայելյանի, Օննիկ Չիֆթե Սարաֆի, Մերուժան Պարսամյանի, Հակոբ Քյուֆեճյանի, Միքայել Մանվելյանի, Մադաթ Պետրոսյանի և Սուրենի պատմվածքները, վիպակները, դրամատիկական գործերը: Հարուստ է նաև պոեզիայի բաժինը: Ի թիվս արդեն հայտնի անունների, այստեղ տպագրվել են նաև ժամանակի ընթացող հասարակությանը դեռևս անծանոթ երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունները:

28 Նույն տեղում, էջ 269

29 Նույն տեղում, էջ 430:

«Գարունի» արձակի բաժնից ուշադրութուն են դրավում ժամանակի համար իրազարձության նշանակութուն ունեցող Վ. Փափազյանի «Ծովափին» վիպակը, Շիրվանզադեի «Արմենուհի» և Շանթի «Ճամբուն վրա» գրամատիկական ստեղծագործութունները, Կ. Միքայելյանի մի քանի պատմվածքները: Այդ գործերում քննարկված են պատմական ժամանակաշրջանի կարևորագույն մի շարք պրոբլեմներ՝ ազդային-ազատագրական պայքարի բովում հայ երիտասարդության վճռական դերի պարզաբանումը, 1905–1907 թթ. հախուռն շարժումներին հաջորդած ռեակցիայի կործանարար հեռանկարները հասարակության բարոյական նկարագրի ուղորտում, կանանց իրավահավասարության ձեռքբերման անհրաժեշտության խնդիրը և այլն:

Շանթի «Ճամբուն վրա» գրամայում նկարագրված է արևմտահայության ազատագրական պայքարի դրվագներից մեկը: Վահրամ Վարդանյանն ազգային հերոս է, մեկն այն քչերից, որոնք անձնուրացորեն նվիրված էին արևմտահայության վիճակի բարեփոխման գործին: Նա կարճ ժամանակով գալիս է Կոստանդնուպոլիս և սպասում կենտրոնի կանչին: Հենց այդ օրերին Վահրամը բուռն սիրով կապվում է Մարիի հետ: Չնայած երջանկության բերկրալից օրերին, Վահրամը բնավ մոռացության չի տալիս իր գերխնդիրը. նա պետք է մեկնի Երկիր, ծայրամասային այն շրջանները, որտեղ բռնակալութունը հայության կյանքը վերածել էր դժոխքի: Մարին, որն այլ հույսեր էր գուրգուրում, գտնում էր, որ հնարավոր է ամուսնանալ և օգնել ազգի կարոտյալներին: Վահրամն անսպասելիորեն կանչի ազդանշան է ստանում: Նա պետք է մեկներ... Մարին խնդրում, ապա պահանջում է, որ նա հետաձգի մեկնումը և հաջորդ օրը ներկայանա վաղօրոք նշանակված տեսակցությանն իր հետ: Հաջորդ օրը, սակայն, այն ժամին, երբ Մարին սպասում էր Վահրամին, նավը վերջինիս տանում էր Տրապիզոն: Մարին անձնասպան է լինում:

1905 թ. խելահեղ ժամանակներն են պատկերված Փափազյանի «Ծովափին» վիպակում: Հերոսուհին՝ Ադդան, բելուուս է, Պետերբուրգի համալսարանի ուսանողուհի: Սիրած երիտասարդի հետ նա ընդգրկվել է քաղաքական պայքարում, ապրել կրակե օրերի հորձանուտում և ինչպես շատերը՝ ճաշակել պարտության դառնութունը: Երիտասարդին ղեկավարել էին, Ադգային՝ լլկել կալանավայրում: Բուժվելու և կազդուրվելու նպատակով մայրը հիվանդ ղստերը տանում է ծովափ: Նա շրջում է մենակ, չի հաշտվում հասարակական և քաղաքական կյանքում ստեղծված ծանր իրավիճակի հետ: «Անդրադարձք մեկ մեր շրջապատի վրա, — կիսում է նա իր խոհերը ծանոթ երիտասարդի հետ, — լուռ է՝ ինչպես անապատ, անշարժ որպես ճահիճ... ոչ միայն անշարժ, այլ հետզհետե գարշահոտ և լի դեռուներով. երեկվա մեր սավառնող բազները այսօր ճախնուտների մեջն են իրենց փորը կշտացնելու իջել»³⁰: Ուժեղ անհատականութուն Ադդան՝ դերասանելով մահը գորշ կյանքի տաղտուկից՝ անձնասպան է լինում:

Գրեթե համանման վիճակ է ապրում և Շիրվանզադեի «Արմենուհի» պիեսի հերոսուհին: Լինելով տաղանդավոր դաշնակարուհի, կիրթ և զգայուն, Արմենուհին շնչահեղձ է լինում ընտանեկան դաղջ կյանքի պայման-

30 «Գարուն», գիրք առաջին, 1910, էջ 166:

ներում: Նրան չեն հասկանում ընտանիքում. թշնամարար են ընկալում ազատ բնության մեջ լինելու նրա սովորությունը: Ամուսնու դավաճանություն լուրը լսելուց հետո նրա հոգու խռովքը դառնում է անսահման: Արմենուհին անկեղծ սիրով կասկում է ճարտարապետ Հմայակ Վառլամյանի հետ և ոգևորված անձնական նոր, ազատ կյանքի գաղափարով ու արվեստին նվիրվելու երջանիկ հեռանկարով վճռում է խզել ամուսնական կապերը Ալադյանի հետ:

Դ. Դեմիրճյանը, որը գրական աշխարհում ճանաչված էր իր Բանաստեղծ, «Գարունի» էջերում տպագրած «Ջութակ և սրինգ» պատմվածքով անմիջապես գրավում է ընթերցողների ուշադրությունը: Այն հայտնություն էր թե՛ հեղինակի գրական տաղանդի նոր կողմերի դրսևորման առումով, թե՛ դարասկզբի հայ դրականության մեջ առհասարակ:

Ժանրային ինքնատիպ հորինվածքով հայ արձակը զարդարում էին Ավետիք Իսահակյանի «Օմար Խայամի վեճը աստծու հետ» և «Անհաղթ խալիֆան» խոհական-փիլիսոփայական գրույցները:

Եթե հետաքրքրությամբ են ընթերցվում և հասուն գրչի արգասիք են Կ. Միքայելյանի «Էրֆուրտի ծրագիրը» և «Վարդանանց պատերազմը» հոգեբանական էտյուդները, ապա անհամեմատ թույլ են նույն հեղինակի «Նահանջ» և «Առաջին վիշտ» պատմվածքները:

Սոցիալական անարդարությունների տրամաբանական վախճանն է արտացոլված երիտասարդ արձակագիր, հետագայի նշանավոր հրապարակախոս Մ. Պարսամյանի «Ոսկիին ծարավը» պատմվածքում:

Գեղեցիկ է արևմտահայ երիտասարդ արձակագիր Հ. Քյուլֆեճյանի «Իչնիկի լիճը» հեքիաթը: Այն «Արև աղջկա» գեղեցկությունն անհարիր դաժանության մի պատմություն է, որն, ասեք, հաստատում է անմարդկային բռնության ոչնչացման անխուսափելիությունը: Նույն հեղինակի «Աղվերակ քարը» հեքիաթը սիրո հավերժության փառաբանումն է, չարի և բռնության կործանման արդարացիության վերաբերյալ ժողովրդի իմաստության դրվատումը:

Օննիկ Ջիֆթե Սարաֆի «Սպեղանին», թեև պրոզայիկ է իր սյուժեով, բայց հեղինակն այնուամենայնիվ գորչ առօրյայի հետնախորքի վրա վեր է հանել ստեղծագործական աշխատանքի գեղեցկությունն ու վեհությունը: Ավելի թույլ են Մ. Մանվելյանի «Աչնան ծաղիկը» և «Հեքիաթ» պատմվածքները: Առաջինը պարզունակ մի պատմություն է չամուսնացած օրիորդի հոգեկան տվյալանքների մասին, իսկ երկրորդը զուրկ է հոգեբանական խորությունից: Նույնքան խոցելի է և գեղարվեստորեն չհիմնավորված Մ. Պետրոսյանի «Կամուրջ» պատմվածքը:

Չնայած այս վերջին գործերին, «Գարունի» արձակը հիմնականում ներկայացնում է 1910-ական թվականների հայ գրականության նոր ձևաբերումները, արտացոլում պատմական ժամանակաշրջանի կենդանի ոգին և ուժեղ անհատների ընդվզումները ռեակցիային հաջորդած բարոյաբան մթնոլորտի և նրա արատավոր հետևանքների դեմ:

* * *

«Գարունի» պոեզիայի բաժինը, որը ևս մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ընդգրկում է Հայ ժողովրդի երկու թևերի թե՛ արգեն ճանաչում գտած, թե՛ երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունները: Բավական է հիշել, որ ավանախի երկու գրքերում տպագրվել են Ա. Իսահակյանի չորս, Ալ. Մատուրյանի ինը և Վ. Տերյանի հինգ բանաստեղծությունները, որպեսզի պարզ գառնա այս բաժնի կշիռը: Ընթերցողներին արգեն քաջածանոթ վերոհիշյալ բանաստեղծների հետ մեկտեղ լավ տպավորություն են թողնում նաև երիտասարդները: Այսպես, հետաքրքրությամբ են ընթերցվում Մ. Պարսամյանի (Փարիզ) խոհական «Մարդկայինը», Հրանտ Նազարյանի (Կոստանդնուպոլիս) «Սև երգեր» շարքի սիրակարոտ կրգերը, Ռուբեն Սևակի (Կոստանդնուպոլիս) և Արսեն Երկաթի (Կահիրե) քնարական տողերը, Սիմեոն Բաբիյանի (Սիմֆերոպոլ) և Բագեն Սիմեոնի (Թավրիզ) խոհական-փիլիսոփայական բանաստեղծությունները, Ո. Անուխյանի սրտահույզ օրորը և այլն: Ուշադրության արժանի է և այն երևույթը, որ 1905–1907 թթ. հեղափոխական շարժումներին հաջորդած ռեակցիայի տարիներին Ալ. Մատուրյանի, Հակոբ Հակոբյանի, Շուշանիկ Կուրղինյանի բանաստեղծությունները տոգորված են լավատեսությամբ, աշխատավորության խորին հավատով դեպի իրենց ապագան: Անշուշտ, «Գարուն» գրական ժողովածուի պոեզիայի պսակն են կազմում Տերյանի բանաստեղծությունները, որոնք բարձր գնահատականի են արժանացել «Հորիզոն» թերթում: Լրագրող Մարգար Ավետիսյանը, հանգամանորեն ներկայացնելով «Գարունի» առաջին գրքի գրական գործերը, առանձին հիացմունքով է խոսում Տերյանի պոեզիայի թարմության մասին: «Իսկական բանաստեղծն է այս, – ընդգծում է գրախոսը, – որ կարողանում է իր հոգու կայծից քո հոգում հրգեհ բռնկցնել, իր սրտի անուշ բուրմունքից արբեցնում է քեղ, կամ իր նազելի թախիծով քո սրտից հառաչ գուրս քաշում»³¹:

«Գարուն» գրական հանգեսն իր վրա է հրավիրել ընթերցող հասարակության ուշադրությունը մի շարք առումներով. նախ իրենց նոր ստեղծագործություններն այստեղ լույս ընծայելու առիթ են ունեցել ժամանակի ակնառու գրողները: Բացի գրանից, գրա շնորհիվ է, որ Հայ գրականության անդաստանում ի Հայտ են եկել բազմաթիվ նոր անուններ (ընդ որում, միմյանց հարևանությամբ տպագրվել են և՛ արևելահայ, և՛ արևմտահայ արձակագիրներն ու բանաստեղծները):

«Գարունի» գրական բաժնում, ինչպես արգեն նշվեց, տպագրվել են և թույլ գործեր, որոնց առիթով Տերյանը մտահոգություն էր հայտնում տակավին դրանց ձեռագրերը ստանալու ժամանակ: Ասկայն, քանի որ խմբագրության խնդիրներից էր երիտասարդ գրողներին տպագրվելու հնարավորություն ընձեռելը, ապա լույս էին տեսնում ստացված և այն գործերը, որոնք, ընականաբար, բոլորը չէ, որ կարող էին գասվել լիարժեք ստեղծագործությունների շարքը:

Տպագրելով ընթերցողներին գեռես անծանոթ բանաստեղծների և արձակագիրների ստեղծագործությունները, խմբագրությունը գրանով իսկ

31 «Հորիզոն», 1910, №130 (տե՛ս «Գրական էջեր» բաժինը):

ճանաչում է ստեղծել նրանց համար. թեև ոչ ամբողջությամբ. բայց ընդհանուր գծերով ներկայացրել 1910-ական թվականների հայ գրականութ-
յան պատկերը: Դեռևս ժամանակին այդ միտքն է հայտնել «Հորիզոն»
թերթի լրագրող Մ. Ավետիսյանը. որը փոքրաթիվ վերապահումներով
նշում է. թե «Գարունի» առաջին գիրքը ներկայացնում է «մեր արդի գրա-
կանության պատկերը»³²:

* * *

«Գարունի» գրականագիտական-գրաքննադատական ուղղվածությամբ
ստեղծված երրորդ գիրքը հիմնականում ներկայացնում է Մոսկվայի հա-
մայտարանի շրջանավարտների առաջին հողվածները: Քանի որ այն
սկզբնասլես որոշված էր նվիրել քննադատական հողվածներին. խմբագ-
րությունը նպատակահարմար է գտնում գրքի խմբագրական կազմում
ընդգրկել նաև քննադատի անուրանալի ձիրք ունեցող Ալեքսանդր Մյաս-
նիկյանին (Մարտունիին): «Նա կարող է օգտակար լինել «Հասարակական-
քննադատական» ամսանախր խմբագրելիս»,— Ալ. Մատուրյանին հղված
1910 թ. հոկտեմբերի 3-ի թվակիր նամակում գրում է Տերյանը³³: Մյասնիկ-
յանը սիրով հանձն է առնում ոչ միայն գրքի խմբագրման գործը, այլև
գրում է մի հողված՝ նվիրված Հովհ. Հովհաննիսյանի և Ալ. Մատուրյանի
բանաստեղծությունների հասարակական արժեքի պարզաբանմանը. Հաշվի
առնելով երկու բանաստեղծների գրական վաստակի նմանությունները,
նա նրանց գաղափարները վերլուծում է «մի շրջանակում. համեմատական
ձևով»: Այս «միացումը» որոշակի արհեստականություն է հաղորդում հե-
ղինակային եզրակացություններին, քանի որ դյուրին չէ երկու տարբեր
խառնվածքի արվեստագետներին «տեղավորել» օբյեկտիվ գնահատականի
միևնույն սանդղակում: Բացի այդ, Մյասնիկյան քննադատը շրջանցում է
և բանաստեղծների պոեզիայի գեղարվեստական արժանիքների պարզա-
բանման խնդիրը: Այս բաժանումը նույնպես սահմանափակում է երկու
բանաստեղծների գրական ժառանգության օբյեկտիվ գնահատականի հնա-
րավորությունները: Հավատարիմ մնալով մուտքի խոսքում արտահայտած
իր նպատակադրմանը, Մյասնիկյանը քննության է առնում բանաստեղծ-
ների պոեզիայի հասարակական արժեքը: Այսպես, խոսելով ժամանակի հա-
մար բնորոշ հայրենասիրական գաղափարների արժարժման մասին, նա
Հովհաննիսյանի և Մատուրյանի «անհանգիստ» ուսուցիչներ՝ Արծրունու,
Պատկանյանի, Բաֆֆու մարտնչող հայրենասիրության համեմատությ-
յամբ, նրանց պոեզիան բնութագրում է որպես «մեղմ» աշակերտների կրա-
վորական ազգասիրություն: Այնուհետև միմյանց հաջորդում են այլ որա-
կումներ. այսպես, ընդգծվում է բանաստեղծների «մանր-բուրժուական
մտածելակերպը», որի ապացույցն է համարվում նրանց մի շարք կրոնա-
կան բանաստեղծություններում արտացոլված «տիրացուականությունը»:
Նա «կատարյալ կղերամտություն» է համարում այն, որ Հովհաննիսյանն
ազգային դոյություն ու գարգացման խթանը համարում է էջմիածնի Աթո-
ուր: Նշելով հանդերձ, որ Մատուրյանը Հովհաննիսյանի համեմատությամբ

32 Նույն աեղում, № 124:

33 Վ. Տ ե Ր Յ ա ն. Եժ. հ. 3, էջ 332:

ավելի «Հաճախ երեան է գալիս որպես դեմոկրատ», Մյասնիկյանը, սակայն, շտապում է նրան մեղադրել լիբերալիզմը և գեմոկրատիզմը միմյանց հետ հաշտեցնելու տակտիկայի համար, մի րան, որ համարում է «խսկական դեմոկրատիզմի պրոլետարական իդոլոգիայի բացակայութան հետևանք»:

Քաղաքական այս գնահատականները, որոնք վկայում են Մյասնիկյան քննադատի հայացքների միակողմանիութան կամ ավելի ստույգ պրոլետարական գաղափարախոսութանն անվերապահորեն նվիրվածության մասին, միանգամայն տեսանելի են դարձնում, որ բոլշևիկյան ասլագա դեկավար գործիչը գրականագիտության ասպարեզում ևս դրսևերում էր իր քաղաքական սկզբունքները: Նա դեկավարվում էր պրոլետարական գաղափարախոսութան կամ իր իսկ խոսքերով «համամարդկային գաղափարների և ազատարար շարժումների արագընթաց զարգացման» իրողութամբ, որոնք, ինչպես խոստովանում է «իդեոլոգի սրտին ու մտքին այլ բան են ասում»: Առաջին հերթին ա՛յն, որ «XX դարում չի կարելի հանդուրժել նացիոնալիզմի քարոզը, այն էլ ոռուսահայի կյանքում, որի վիճակը սերտ կերպով կապված է համապետական իշխանության հետ»³⁴:

«Գարունի» երրորդ դրքի հեղինակներից ոմանք նույնպես աչքի էին ընկնում պատմական ժամանակաշրջանին բնորոշ «մարտական» կեցվածքով, այսպես կոչված հին բարքերի և արժեքների հախուռն քննադատութամբ: Դրանցից էր Ալեքսանդր Ռուբենին, որի գրչին է պատկանում «Սմբատ Շահազիզ» քննադատական հոդվածը: 1865 թ. հրատարակած «Լեոնի վիշտը» և զանազան բանաստեղծություններ» դիրքը նա անվանում է սոսկ դիդակտիկ գրվածք, իսկ «Լեոնի վիշտն» իբրև գեղարվեստական գործ թյուրիմացություն: Նա գտնում է, որ բանաստեղծին չի հաջողվել ստեղծել 60-ական թվականների առաջադեմ հայ ինտելիգենտի կերպարը, որովհետև Լեոնը միայն կրկնում է հեղինակի մտքերը, որոնք հեռու են ժամանակի առաջադիմական գաղափարներից: Եթե 60-ական թվականների հայ լիբերալները պայքարում էին հանուն աշխարհիկ կրթության և ինքնագործունեության ծավալման ու անհատ պայքար վարում կղերականության դեմ, Շահազիզը, սակայն, ըստ քննադատի՝ ազգային գիտակցության հիմքերը տեսնում էր ոչ թե ժամանակի հասարակական կյանքի անհետաձգելի պահանջների, այլ հին հայ փառքի մեծարանքի մեջ: Նրա բանաստեղծությունների ընդհանուր ոգին ևս Ռուբենին համարում է անցյալի պաշտամունքը և բարոյական խրատը: Շահազիզին հանիրավի կտրելով 60-ական թվականների առաջավոր գաղափարներից, Ռուբենին մի զարմանալի ինքնավստահութամբ հայտարարում է, թե «նա յուր գրքերը գրում էր այն սերնդի համար, որը հայ հասարակական կյանքում արդեն վազուց մեռած էր»: Ավելին, նա կայացնում է ևս մի դատավճիռ, համաձայն որի, «նրա դրական արշալույսը միաժամանակ և վերջալույս է եղել»³⁵: Իհարկե, ժամանակավրեպ է հեղափոխական քննադատի ուղղագիծ հարցադրումների և դնահատականների այս շարանը, որի զավեշտական եզրահանգումն է նաև այն միտքը, թե Դոդոյանի, Սադաթյանի և

34 «Գարուն», գիրք երրորդ, 1912, էջ 245:

35 Նույն տեղում, էջ 35:

Շահագրգիռ մեծարումը բացատրվում է սոսկ Հայ գրականության աղքատությանը: Ինչ վերաբերում է քննագատի այն «բարյացակամ» ասույթներին, թե նրա պոեզիայում կան նաև սիրո հաջողված երգեր և քաղաքացիական երանգներով գրված բանաստեղծություններ, ապա դրանք շատ հեռու են 1860-ական թվականների Հայ նոր գրականության արչալույսի առաջին քնարերգուներից մեկի՝ Շահագրգի պոեզիայի արժանի գնահատականից: Դրությունը ոչնչով չի փրկում նաև Ռուբենիի այն միտքը, թե Շահագրգին «առաջինն էր, որ իբրև բանաստեղծ ամենամեծ փունջն էր դնում դեռ արհամարհված աշխարհաբարի ճակատոս»³⁶։ Ինչ հողվածը, սակայն, և՛ իր եզրահանգումներով, և՛ ենթատեքստով, նսեմացնում է բանաստեղծի վաստակի նշանակությունը:

Երրորդ գրքի հետաքրքրական հողվածներից է Ցոլակ Խանզադյանի «Ավետիս Ահարոնյան (քննական բնորոշման փորձ)» ուսումնասիրությունը: Հեղինակն Ահարոնյանի գրական գործերը քննարկում է թե՛ դրանց գեղարվեստական առանձնահատկությունների, թե՛ գաղափարական ուղղվածությունն առումներով, միաժամանակ ներկայացնելով կուսակցական իր համոզմունքներից բխող եղրակացությունները: Ելնելով դեղագիտական ընդունված չափանիշներից՝ Խանզադյանը քննադատում է Ահարոնյանի գրելաձևը, այն է՝ արհեստական տպավորություններ ստեղծելու մղումով նրա որդեգրած պաթետիկ ոճը, պատմվածքների մուտքից մինչև ավարտը շարունակվող դժբախտության օրհնությունը և այլն: Գրաքննադատն Ահարոնյանի ստեղծագործության թերություններից է համարում և այն, որ նրա պատմվածքներում բացակայում է Արևմտյան Հայաստանի կենդանի իրականության պատկերը, չկա գյուղական կենցաղի հավաստի նկարագրությունը: «Նա չի կարողացել վերարտադրել գյուղացու հոգեբանությունը, — գրում է Խանզադյանը, — Ահարոնյանի Հայ գյուղում խիստ սակավ կալատահեք Հայ գյուղացու»: Անգամ գրողի ձեռք բերած հեղինակությունը նա տեսնում է «ոչ թե նրա տաղանդի խորություն մեջ, այլ րնթերցողի ցաված հոգում»³⁷: Այս ամենով հանդերձ, հետաքրքրական է, որ հողվածագիրն օբյեկտիվորեն է գնահատում Ահարոնյանի գրվածքների մարդասիրական ոգին: Մարգր, նրա կյանքը, նրա արյունը սուրբ են գրողի համար: «Խոր հարգանքի զգացմունք պետք է տածել դեպի գրողը, որ կարողացել է մեր կյանքի սոսկալի պայմաններում էլ բարձր սլահել մարդասիրության անբիծ դրոշակը»³⁸, — գրում է նա: Նրա գրվածքներն, ըստ Խանզադյանի, մշտապես համակրանք են ծնել դեպի տանջված եղրայրը, արթնացրել մարդկանց խիղճը: Այսուհանդերձ, նա մնում է այն սխալ կարծիքին, որ եթե նույնիսկ Ահարոնյանի որոշ գործերի հասարակական նշանակությունն անժխտելի է, սակայն գեղագիտական արժեքը մնում է աննշան: Խանզադյանը ևս ղեկավարվելով կուսակցական սկզբունքներով, կշտամբում է Ահարոնյանին՝ նրա, այսպես ասած, ապադասակարգային աշխարհընկալումների համար: Նա հայտարարում է, որ միատարր աղղ չկա և քանի որ այն վեր է ածվել ընչազուրկների ու հարստահարողների

36 Նույն տեղում, էջ 97:

37 Նույն տեղում, էջ 141:

38 Նույն տեղում, էջ 147:

երկու ստվար «բանակի», գրողը պարտավոր է իր ստեղծագործության հասարակական ունեւոր իդեալները քաղել «անդուլ կովի բովից»: Հասարակության զարգացման առաջին պայմանը նա համարում է ազգային քաղաքականության և ուսմանտիկական մտածողության ժխտումը, իսկ գեղարվեստական գրականության ինդիքը հարուստ ներաշխարհ ունեցող կերպարի ստեղծումը և ընթացիկ հրատապ հարցերի լուծման իդեալի որոնումը քաղաքականության մեջ:

Հետաքրքրական է, սակայն, որ Խանզագյանը որքան էլ անարդարացիորեն խստապահանջ էր Ահարոնյանի գրական ստեղծագործության դնահատման խնդրում, այնպես էլ խմբագրությունն իր հերթին սեփական պահանջներն էր ներկայացնում նրան: Այսպես, 1911 թ. նոյեմբերի 9-ի թվակիր նամակում Տերյանը թեև Խանզագյանին հայտնում է, որ խմբագրության մի քանի անդամների հետ կարգացել է նրա հոդվածը և այն հավանել, բայց միաժամանակ գտնում է, որ այն խմբագրման կարիք ունի: Նոյեմբերի 24-ի թվակիր նամակում ևս հայտնելով, որ հոդվածն արդեն ընդունված է, հեղինակին առաջարկում է խմբագրել դրա որոշ հատվածները³⁹:

«Գարունի» երրորդ գրքի տպագրությունից որոշ ժամանակ անց, ի պատասխան Խանզագյանի այն հարցումի, թե ինչու է խմբագրությունը կարծիքը փոխել նրա հոդվածի մասին, Տերյանը հայտնում է, որ իր անձնական կարծիքը մնում է անփոփոխ: Հոդվածը հավանել է ի սկզբանե, բայց հեղինակի հայտարարություններից մի քանիսը համարում է «մասամբ ГОЛОСЛОВНЫМ, մասամբ սխալ և այժմ ավելի քան առաջ» գտնում է, որ այն շատ ավելի հաջող կլիներ, եթե «մի քանի բան» շրջանցվեր, իսկ «խմբագրությունը մի քիչ ավելի կարգին խմբագրություն լիներ և ոչ այսպիսի «կոնգլոմերատ»⁴⁰: Որո՞նք էին այդ «մի քանի բաները»: Դրանք Խանզագյանի գնահատականներն էին, տրված Ահարոնյան գրողին. «Օրինակ, ազգային և ապագային մասին, Ահարոնյանի մեծ քաղաքացի լինելու մասին, նրա հումանիստության մասին, վերջապես քրիստոնեության մասին, սիրո մասին»: Այնուհետև արդեն իբրև խմբագիր նա հետևյալ կարևոր միտքն է հայտնում պարբերաթերթի դերի և նշանակության մասին առհասարակ. «Ուրիշ բան է առանձին գիրքը, ուր հեղինակը, թեկուզ ի վնաս իրան, տպում է այն, ինչ ուզում է, ուրիշ բան է ժողովածուն կամ ժուռնալը»⁴¹: Տերյանի համոզմունքով մամուլի օրգանը ոչ միայն կոչված էր արտահայտելու որոշակի մի խմբի կամ հոսանքի հայացքներն ու սկզբունքները, այլև պայքարելու այդ սկզբունքների հաղթանակի համար: Ահարոնյանին վերաբերող՝ Խանզագյանի բարյացակամ տողերը Տերյանը գիտում էր իբրև անպատեհ զիջումներ:

«Գարունի» երրորդ գիրքը բացվում է Խաչատուր Աբովյանին նվիրված Կ. Կուսիկյանի «Հանճարեղ սիրտ» հոդվածով: Հոդվածագիրը վեր է հանել հայ մեծ լուսավորչի կյանքի և գործունեության հիմնական ուղղությունները, որոնք համարում է «մի միաձուլյ պոեմ, շքեղ գեղանկար»: Հոդվա-

39 Վ. Տ ե Ր Յ Ա ն. Ե Ժ. Հ. 4, էջ 32, 35:

40 Նույն տեղում, էջ 53:

41 Նույն տեղում:

ծում վերլուծված է «Վերք Հայաստանի» վեպը և տրված է Արուսյանի գործունեության պատմական նշանակության գնահատականը: Այսպես, առանձին քննության առարկա են դարձել Արուսյանի մանկավարժական գործունեությունը և նրա մանկավարժական հայացքները: Մեծ տեղ է նվիրվել նրա ժողովրդայնությանը, գյուղական կյանքի և ժողովրդի մտածողության ու հուզաշխարհի «րնտիր գոհարները» վեր հանելու նրա վարպետությանը: Արուսյանը գնահատվում է իբրև աշխարհիկ լեզվի և վիպասանության հիմնադիր, հայ ժողովրդի ազդատագրական ձգտումների առաջին երգիչ: Կուսիկյանը նրան համարում է հայ ոգու մարմնացում, որի գրչով խոսել է «Հայության տառապած հոգին, մեր շղթայած միտքն ու սիրտը»: Հողվածում թերևս վիճելի է հեղինակի այն համոզմունքը, թե գրական հայերենը, եթե հետագայում մշակվեր Արուսյանի «հարթած չավղով», ավելի կենդանի կլիներ ու հայ ընթերցողի համար ավելի մատչելի: Այնինչ, ըստ հողվածագրի, «Հյուսիսսփայլի» լեզուն, որն իբրև հիմք էր ընդունել գրարարը և զուգվել աշխարհաբարի արտաքին ձևերով, դժվարամարս էր հասարակության համար⁴²:

«Հանճարեղ սիրտ» հողվածը «Գարուն» հանգեսի լավագույն նմուշներից է, որը գրված է «Վերք Հայաստանի» վեպին արժանի շքեղ գունագեղությունը և խոր ու անկեղծ հուզականությամբ: Դարասկզբին հայ գրականագիտությունը, կարծեք, հատուցում էր իր ժողովրդի մեծ զավակի նախորդ դարում կրած տառապանքների ծանր գինը:

«Գարունի» երրորդ գրքում ղետեղված քննադատական ակնարկներից երկուսը նվիրված են Հ. Թումանյանին: Եթե Դավիթ Անանունի «Անցյալի մեծարանքը» հողվածում Թումանյանի պոեզիան գնահատված է իբրև նահապետական գյուղի և գյուղացու հոգեբանության գեղարվեստական արտացոլում, իսկ Թումանյանը «գերադանցապես հայ գյուղական ժողովրդի բանաստեղծ»⁴³, ապա Պողոս Մակինցյանի «Դիմագծեր» ակնարկի առաջին մասում, որը նվիրված է Թումանյանին, բացահայտվում են հայ մեծ բանաստեղծի «տաղանդի բազմակողմանի հատկությունները»⁴⁴: Գրաքննադատը վեր է հանում Թումանյան մանկագրի ինքնատիպությունը, ազդային վշտի պատկերման խորությունը նրա գործերում, Թումանյանի պոեմների արժանիքներն իբրև ազգային պոեմներ, որոնց մեջ ցույանում և բյուրեղանում է հայ իրականությունը: Ի վերջո, Մակինցյանը հանգամանորեն բնութագրում է Թումանյանի ոճի էպիկական առանձնահատկությունները: «Սասունցի Դավիթ» պոեմը նա անվանում է իսկական և անզուգական գեղարվեստական գործ, իսկ «Գիքորը» համարում «մեր բելլետրիստիկայում մի այնպիսի գոհար, որի նմանը ոչ ինքը չուզի: Թումանյանն է արաադրել, ոչ էլ մի ուրիշ հեղինակ»⁴⁵: Մակինցյանը Թումանյանին ամենայն իրավամբ համարում է «մեր մեծագույն ազգային բանաստեղծը, որովհետև նա մի ամբողջ շկույա է առաջ բերել և հետևողներ է ունեցել»: Այս ամենի հիման վրա է, որ քննադատը պարտագրում է հայ գրականա-

42 «Գարուն», գիրք երրորդ, էջ 28:

43 Նույն տեղում, էջ 100:

44 Նույն տեղում, էջ 248:

45 Նույն տեղում, էջ 310:

գետներին՝ իրենց առաջնահերթ ուսումնասիրությունն նյութ դարձնել թու՛մանյանի պոեզիայի մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Նույնքան հետաքրքրական է Մակինցյանի «Դիմագծերի»՝ Ավետիք Իսահակյանին նվիրված երկրորդ մասը, որտեղ վերլուծված են բանաստեղծի ընտելության երգերը, սիրո քնարը, մայրական սիրուն նվիրված բացառիկ գեղեցիկ բանաստեղծությունները, խոհական-փիլիսոփայական գործերը: Առանձին ուշադրություն է արժանացել «Աբու-Լալա-Մահարի» պոեմը, որը քննական լուրջ ուսումնասիրություն է նվիրված պատմական արար բանաստեղծին և նրա գրական կերպարին: Չնայած դրա քննադատը պոեմը համարում է թույլ գործ, իսկ քարոզը՝ ոչ ազդու, բայց միաժամանակ նշում է, թե նկարագրություններն ապացուցում են, որ բանաստեղծը խոսում է ոչ թե մի օտար նյութի մասին, այլ այդ նյութին համապատասխան ոճով. «Այս տեսակ ընդարձակ և համարձակ խոհերից և նյութին այնքան ներդաշնակ ոճով, դեռ չի խոսել մեր բանաստեղծներից և ոչ մեկը»: «Ավ. Իսահակյանը, անպայման, ինքնատիպ լիրիկ է և ուսաստի՛վ դրականություն մեջ-ունիկում»⁴⁶, – ավարտում է իր խոսքը գրաքննադատը:

* * *

Նպատակալսաց և արգասավոր է եղել «Գարուն» ամսանախի կյանքը: Այն հայ ընթերցողին ներկայացրել է ոչ միայն XX դ. առաջին տասնամյակի տրևմտահայ և արևելահայ գրողների նոր ստեղծագործությունները, այլև ժամանակի հայ գրականագետների հետաքրքրական ուսումնասիրությունները հայ գրողների վաստակի մասին:

Որքան էլ Մարտունին, Ռուբենին կամ Խանդաղյանը սլատմական ժամանակաշրջանի նոր հովերի ոգով տոգորված անդիջում կըքով և ոչ միշտ անկողմնակալ դիրքերից քննադատական կրակի ներքո են վերցրել հայ գրողներից ոմանց ստեղծագործությունները, նրանց հոգվածները, սակայն, անվերապահորեն բազմազանություն են մտցրել և նոր ուղղություն ստեղծել հայ գրական աշխարհում: Ինչ վերաբերում է Կուսիկյանի, Մակինցյանի և Խանդաղյանի ակնարկներին, ապա դրանց շնորհիվ հայ գրաքննադատական միտքն իբրև գիտություն առավել ձևավորվելով հասել է մի նոր, բարձր աստիճանի:

Նոր հոսանքը, որով Տերյանը և նրա գործընկերները ձգտում էին թարմություն հաղորդել հայ գրականությանը և կենսական գաղափարներով նոր ոգի ներարկել դրան, ինչ-որ չափով կատարել է իր դերը: Այն ոչ միայն պատմական ժամանակաշրջանում նպաստել է հայ գրականագիտական մտքի զարգացմանը, այլև քաղաքական դրականության մեջ հաստատել Հոգևոր Հայաստանի գաղափարի իմաստնությունը, որը հանգամանորեն հիմնավորել է Տերյանը՝ «Հոգևոր Հայաստան» իր նշանավոր հոգվածում: Այդ գաղափարի իրականացման տրամաբանական ավարտն էր 1915–1916 թթ. Տերյանի և Մակինցյանի մասնակցությունը Մաքսիմ Գորկու և Վալերի Բրյուսովի հայտնի հրատարակությունների աշխատանքնե-

⁴⁶ Նույն տեղում, էջ 365:

րի իրականացմանը⁴⁷: Դրանց միջոցով Հայ գրական գանձերը ներկայացվել են ուսուցիչներին և արժանացել մասնագետների արժանի գնահատականին: Բրյուսովը Հայ բանաստեղծությունն անվանել է Հայ ազգի ազնվականության վկայական: Նկատի ունենալով այդ գնահատականի նշանակությունը Հայ հոգևոր մշակույթի արժանիքների ճանաչման հարցում, 1916 թ. հունվարի 13-ին Թիֆլիսում կայացած Բրյուսովի դասախոսության երեկոյին, Հ. Թումանյանն իր հերթին բացահայտել է Հայ մշակույթի հզորության ակունքներն ու հարատևման գաղտնիքը: Իր ճառում նա մասնավորապես ընդգծել է. «Հիրավի, Հայ հանձարը կարողացել է խոսել մարգկային սրտի ամենանվիրական ու ամենաքնքուշ գագամունքների հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացի, որ, ապաշխարողի կերպարանքով, իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել աստծո՝ իրեն հետ երես առ երես:

Եվ նույնիսկ էսօր էլ թեպետև իր հայրենիքի մի ծայրից մինչև մյուսը հոշոտված ու արյունաթաթախ՝ միայն խորապես խոցված ու ծանր վշտացած է հայը և ոչ թե խորտակված ու հուսահատ, և չի գազարել ստեղծագործության ոչ մի ասպարեզում...

Մրանից էլ ավելի մեծ ի՞նչ ազնվականության վկայական կարող է ներկայացնել աշխարհին մի ժողովուրդ»⁴⁸:

Հովհաննես Թումանյանը մեծ արժանապատվությամբ հաստատում էր Հոգևոր Հայաստանի լինելության իրողությունը:

ЛИТЕРАТУРНО-ХУДОЖЕСТВЕННЫЙ АЛЬМАНАХ "ГАРУН"

(1910-1912 гг.)

МАРГО МХИТАРЯН

Р е з ю м е

Литературно-художественный альманах "Гарун" издавался в Москве благодаря усилиям Вагана Теряна, Погоса Макинцяна и Карена Микаеляна. В трех объемистых выпусках альманаха (1910—1912), наряду с известными писателями и поэтами (А. Ширванзаде, В. Папазян, Д. Демирчян, А. Исаакян, В. Терян, Р. Севак и др.) выступали также представители молодой поросли армянской литературы. Помимо того, издание привнесло свою неоспоримую лепту в развитие армянской литературно-критической мысли, ибо на его страницах с блестящими критическими статьями выступали литературные критики того времени (А. Мясникян, А. Рубени, Ц. Ханзадян, П. Макинцян).

⁴⁷ Сборник армянской литературы. Под ред. М. Горького, Пб., 1916; Поэзия Армении с древнейших дней. Под ред. В. Брюсова, М., 1916.

⁴⁸ Թումանյանը քննադատ, կազմեց և խմբագրեց նվ. Թումանյան. Երևան, 1939, էջ 336: